

ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի  
Գիտական խորհրդի 2016 թ. դեկտեմբերի 23-ի որոշում  
(արձանագրություն թիվ 13)

Համաձայն ՀՀ կառավարության 18.10.2016թ N1060-Ա ծրագրի «Բնապահպանության» բաժնի 5-րդ կետի «ե» ենթակետի, 2017-2019 թթ. նախատեսվում է “Երևան քաղաքում Բուսաբանական այգու հիմքի վրա ստեղծել կենսաբազմազանության պահպանման և բնապահպանական կրթության ազգային կենտրոն”:

Կառավարության առաջարկված ծրագրին արձագանքել է Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի հիմնադիր՝ Ռ. Խաչատրյանը՝ առաջարկելով Բուսաբանական այգու զարգացման և հիմնանորոգման վերաբերյալ համառոտ հայեցակարգ, որը և քննարկվել է ինստիտուտի գիտական խորհրդում:

Գիտական խորհուրդը որոշեց.

1. Ներկայացված հայեցակարգը չի պարունակում բավարար տեղեկատվություն ծրագրի մասին և այդ տեսքով և ձևաչափով այն չի կարող հավանության արժանանալ: Ըստ էության, հայեցակարգում Բուսաբանական այգին դիտվում է որպես միանգամայն ազատ տարածք, որտեղ ցանկացած հատվածում հնարավոր է ստեղծել բնակչության հանգստի ու ժամանցի համար հարմարավետ օջախներ: Դա ընդունելի մոտեցում չէ, քանի որ Բուսաբանական այգին՝ հանդիսանալով առաջին հերթին գիտական հաստատություն, ունի իր կանոնադրությամբ սահմանված ռեժիմային սահմանափակումներ, որը և ընդունված է բուսաբանական այգիների համաշխարհային կոնգրեսի կողմից: Առաջարկվող հայեցակարգի իրականացումը հղի է տասնամյակների ընթացքում ստեղծված բուսական հարուստ հավաքածուների անդառնալի կորստի վտանգով:
2. Հայեցակարգում նշված կրթական կենտրոնի որոշ բաղադրիչների /կառույցների (համայնքային այգի, ձիարշավարան, էթնոգրաֆիկ թանգարան, բնաթերապևտիկ կենտրոն, ինստեկտարիում և այլն) ստեղծման նպատակը և դրանց գործունեության ոլորտը անհասկանալի են և միանգամայն անընդունելի:
3. Ներկայացված փաստաթղթում բացակայում են ծրագրի իրականացման մեխանիզմները՝ /կատարողներ, համակատարողներ, նախատեսված գործողությունների ժամանակացույց, վերջնական արդյունք, ներդրվող ֆինանսական միջոցների ծավալ և այլն/:
4. Առաջարկվում է ինստիտուտի կողմից ընտրել առաջատար գիտնականներից կազմված մասնագիտական խումբ, որն իր գործուն մասնակցությունը կունենա ՀՀ Կառավարության ծրագրի իրացման աշխատանքներին:
5. ՀՀ Կառավարության ծրագրի իրականացման նպատակով ինստիտուտի կողմից հնարավոր և ընդունելի է համարվում Երևանի բուսաբանական այգու տարածքից 18-20 հա՝ ոչ կոլեկցիոն հատվածը:
6. Նշված տարածքում ՀՀ Կառավարության ծրագրից բխող գործունեություն ծավալելու դեպքում համակառավարման միջոցով անհրաժեշտ է երկու կողմերի միջև ձեռք բերել հստակ պայմանավորվածություն՝ ծրագրի իրացման արդյունքում գոյացած ֆինանսական միջոցներից որոշակի ներդրում ապահովելու

